ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

STATE REVENUE COMMITTEE OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

0015, ք. Երևան, Մ. Խորենացու 37 Հեռ.՝ 50 20 20, 59 46 01 37 M. Khorenatsi Str., 0015, Yerevan Tel.: 50 20 20, 59 46 01

№ _____ « ____ » _____ 200 թ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի ղեկավար
պ-ն Դ.Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի կատարումն ՀՀ կառավարության 21.01.2010թ.-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու և ՀՀ կառավարության 26.06.2008թ.-ի №775-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №97-Ն որոշման 1.1 և 1.2. կետերի, ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ուսումնասիրվել են հարկային մարմիններ ներկայացվող հաշվետվությունները՝ դրանք պարզեցնելու նպատակով: Մասնավորապես՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքներով առաջարկվել է.

1) հարկ վճարողների զգալի մասի համար կրճատել ներկայացվող հաշվետվությունների քանակը (ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, ոչ ռեզիդենտների շահութահարկի, հաստատագրված, բնապահպանական և բնօգտագործման, ճանապարհային, հանրային ծառայությունների կարգավորման և այլ պարտադիր վճարների մասով).
2) ներդնել հարկային հաշվարկների միասնական ամփոփաթերթ, որով հարկ վճարողներն իրենց վերաբերյալ տրամադրելու են տեղեկություններ եռամսյակային կտրվածքով.
3) միասնականացնել բոլոր հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետները.
4) Էլեկտրոնայնացնել բոլոր հաշվետվությունների ներկայացումն ու մշակումը՝ զուգահեռաբար զգալիորեն կրճատելով թղթային կրիչներով ներկայցվող տեղեկությունների պահանջը:

Միաժամանակ, ուսումնասիրության արդյունքներով մշակվել է համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը 09.03.2010թ.-ին ուսումնասիրության տեղեկանքի հետ ներկայացվել է կարծիքի՝ ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարություններին, ինչպես նաև շահագրգիռ հասարակական կազմակերպություններին: Օրինագծերը նաև հրապարակվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական կայքում՝ հանրային քննարկման նպատակով:

Քանի որ առ այսօր օրինագծերի վերաբերյալ արձագանքներ չեն ստացվել, և հաշվի առնելով վերը նշված №97-Ն որոշմամբ սահմանված սուղ ժամկետները, Ձեզ է ներկայացվում օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որն ուղարկվել է նաև ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության ենթարկելու նպատակով:

Առդիր՝67թերթ:

Հարգանքով՝

Գ. Խաչատրյան

Կատ.՝ Գ.Դավթյան, Հարկ վճարող. սպասարկ. ընթացակարգ. և ուսուց. բ-ն
հեռ./ֆաքս՝ (010) 594-647, grigori_davtyan@taxservice.am